65

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ
ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՌԵԿՏՈՐ _____ Վ.Է. ՈՒՌՈՒՏՅԱՆ
__ սեպտեմբերի 2021թ.

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

ԿԱՐԾԻՔ

«Կորպորատիվ արժեթղթերի շուկայի զարգացման հիմնախնդիրները (Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության նյութերով)» թեմայով Ը.00.03 – «Ֆինանսներ, հաշվապահական» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացվող ատենախոսության վերաբերյալ

Կարծիքի ներկայացված ատենախոսությունը կազմված է ներածությունից, 3 գլուխներից, եզրակացություններից և առաջարկություններից, 171 անուն գրականության ցանկից և հավելվածից: Ատենախոսությունը շարադրված է 149 էջի վրա և պարունակում է 46 գծապատկեր, 19 աղյուսակ և 11 հավելված:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Արժեթղթերի շուկան՝ որպես ֆինանսական շուկայի կարևորագույն հատված զարգացած շուկայական տնտեսության պայմաններում ստանում է կարևորագույն դեր՝ ազատ դրամական միջոցների կենտրոնացման և դեպի տնտեսության տարբեր ճյուղերի ձեռնարկություններ դրանց ներդրման առումով: Չնայած դրան, զարգացող կամ անցումային տնտեսությամբ երկրներում, այդ թվում ՀՀ-ում արժեթղթերի շուկայի զարգացումն ընթանում է համեմատաբար դանդաղ տեմպով (հատկապես բանկային ոլորտի զարագման տեմպերի հետ համեմատած) և հիմնականում ընդգրկում է պետական պարտատոմսերի շուկան: Մինչդեռ կորպորատիվ

արժեթղթերի շուկան ունի ազգային տնտեսության զարգացումը խթանելու հսկայական պոտենցիալ, որի լիարժեք իրագործման նպատակով անհրաժեշտ է կատարել դրանց խանգարող և նպաստող տարբեր գործոնների համակողմանի ուսումնասիրություն:

Միևնույն ժամանակ, ֆինանսական շուկայի զարգացման ընթացքը տարբեր երկրներում ընթանում է տարբեր ուղղություններով և առանձնահատկություններով, հետևաբար զարգացման համար կիրառված միջոցառումների և դրանց արդյունքների համադրությամբ կարելի է բացահայտել ֆինանսական շուկայի զարգացման նոր հնարավորություններ և ուղիներ: Այս առումով նախ և առաջ անհրաժեշտ է դիտարկել հարևան երկրների փորձը, որոնք մեր երկրի հետ ունեն պատմական զարգացման, մշակութային և արժեքային սերտ կապեր և ընդհանրություններ, ինչով էլ պայմանավորված է ներկայացված թեկնածուական ատենախոսության թեմայի արդիականությունը և ուսումնասիրման հրատապությունը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՆՈՐՈՒՅԹԸ

Հեղինակը ատենախոսությունում ներկայացրել է արժեթղթերի շուկայի էությունն ու դերը, ինչպես նաև կորպորատիվ արժեթղթերի էությունը և դրանց առանձին տեսակների շրջանառության առանձնահատկությունները: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվել «արժեթուղթ» և «կորպորատիվ արժեթուղթ» հասկացությունների տարբեր բնորոշումների և մեկնաբանությունների վերլուծությանը: Առանձին ենթահարցով ներկայացված է Հայաստանի Հանրապետության(ՀՀ) և Իրանի Իսլամական Հանչապետության(ԻԻՀ) արժեթղթերի շուկայի մոդելային պատկանելության վերլուծությունը, որտեղ որպես երկու հիմնական բազային մոդելներ ներկայացված են ամերիկյան և ճապոնական մոդելները:

Ատենախոսությունում կատարված հետազոտությունների և վերլուծությունների ընթացքում ատենախոսի կողմից որպես գիտական նորույթ ներկայացվել են հետևյալ դրույթները.

1. Հիմնավորվել է, որ ՀՀ և ԻԻՀ ֆինանսական համակարգերը, անկախ այս երկրների հնարավորությունների և կրոնական տարբերություններին, միմյանց հետ ունեն ավել շատ նմանություններ, բնորոշ գծեր, քան ճշգրիտ կողմնորոշմամբ, զարգացած ֆինանսական համակարգ ունեցող երկրները(ԱՄՆ. Ճապոնիա):
2. Հիմք ընդունելով ՀՀ և ԻԻՀ կորպորատիվ կառավարման ժամանակակից մոդելները, ըստ այդմ՝ հիմնավորվել է ՀՀ կորպորատիվ կառավարման մոդելի նմանությունը Ճապոնական մոդելին, իսկ ԻԻՀ ՝ամերիկյան մոդելի հետ:
3. Հիմք ընդունելով ՀՀ և ԻԻՀ կորպորատիվ արժեթղթերի շուկաների առանձնահատկություններն ու դրանցից բխող հիմնախնդիրները, առաջարկվել է այս երկրների տվյալ շուկաների զարգացմանը միտված բարեփոխումների ֆինանսական ռազմավարություն(բաղկացած 3 քայլերից):

ՍՏԱՑՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՏԵՍԱԿԱՆ և ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Հեղինակի ներկայացմամբ ատենախոսության գիտագործնական նշանակությունը կայանում է նրանում, որ կատարվել է ՀՀ և ԻԻՀ կորպորատիվ արժեթղթերի շուկաների համակարգված հետազոտություն, որի հիմնադրույթները կարող են նպաստել ոլորտի արդի հիմնախնդիրների լուծմանը՝ ակտիվացնելով ներդրումային գործընթացը և արդյունքները կարող են օգտագործվել ՀՀ և ԻԻՀ արժեթղթերի շուկաների հիմնախնդիրների հետագա հետազոտման, ինչպես նաև պետական կարգավորման միջոցառումների մշակման, բարեփոխումների իրականացման նպատակով:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆԵՐԸ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Թեկնածուական ատենախոսությունը զերծ չէ թերություններից և բացթողումներից: Դրանցից նշենք հետևյալները.

1. Այսպես, ատենախոսությունում առկա են որոշ տեխնիկական բնույթի թերություններ, այդ թվում հատկապես՝ կետադրության, շարահյուսության, թարգմանության և ոճաբանական թերություններ, որոնց պատճառով որոշ դեպքերում ձևակերպված մտքերը դարձել են երկիմաստ, կասկածելի:

2. Թեմայի արդիականությունը հիմնավորվել է հետազոտության արդյունքների հնարավոր կիրառական նշանակությամբ, մինչդեռ մեր կարծիքով ընտրված թեման արդիական է անկախ դրա շրջանակներում կատարված հետազոտության արդյունքներից, ուստի արդիականությունը կարող էր հիմնավորվել ինչպես թեմայի վերաբերյալ խնդրահարույց հարցերի առկայությամբ, այնպես էլ տնտեսական կարևոր նշանակությամբ:

3. Ատենախոսությունում վերլուծությունները հիմնականում սահմանափակվում են 2018թ., որոշ դեպքերում՝ մինչև 2008թ, 2012թ տվյալներով, այն դեպքում, երբ արժեթղթերի շուկան ֆինանսական շուկայի առավել դինամիկ հատվածն է, որտեղ յուրաքանչյուր տարի տեղի են ունենում քանակական ու որակական փոփոխություններ: Միևնույն ժամանակ՝ արժեթղթերի շուկայի մասին տվյալները հասանելի են ոչ միայն նախորդ տարիների համար, այլ նաև՝ ընթացիկ տարվա համար:

4. Ատենախոսություն առաջին գլուխը վերնագրված է «Կորպորատիվ արժեթղթերի շուկայի տեսամեթոդաբանական հիմքերը», սակայն 2-րդ և 3-րդ ենթահարցերում ներկայացված է վերլուծություն:

5. Ատենախոսության 1.3. ենթահարցում ներկայացված է «կորպորատիվ արժեթղթերի շուկայի զարգացած երկրների փորձի վերլուծությունը», սակայն հիմնավորված չէ, թե որքանով է դա նպաստում աշխատանքի ներածության մեջ ներկայացված հետազոտության նպատակի և խնդիրների իրագործմանը, ինչպես նաև հիմնավորված չէ հատկապես այս երկու երկրների ընտրությունը:

6. Աշխատանքի երկրորդ գլուխը բովանդակային առումով կարծես թե առաջին գլխի կրկնությունը լինի՝ լրացված որոշ թվային տվյալներով և դրանց վերլուծություններով:

7. Հեղինակի կողմից ԻԻՀ արժեթղթերի շուկայի կապիտալացման աճի 18 տարվա կանխատեսում է ներկայացվել (էջ 25), մինչդեռ կանխատեսումների

ընդունելի առավելագույն ժամանակահատվածը 10 տարի է: Բացի այդ հաշվարկը կատարված է միջին թվաբանականի կիրառմամբ, որը կանխատեսումների իրականացման նպատակով կիրառելի չէ: Կանխատեսումները կատարվում են երեք եղանակով՝ միջին բացարձակ հավելաճի, աճի միջին տարեկան տեմպի, վերլուծական հարթեցման:

8. Աշխատանքի «Եզրակացություններ և առաջարկություններ» բաժնում ներկայացված են ատենախոսի եզրահանգումները, որոնք ընդհանուր առմամբ նկարագրական բնույթի են: Չի երևում դրանցում գիտական նորույթը: Գիտական նուրույթները վերաշարադրման կարիք ունեն՝ մասնավորապես 1-ին և 3-րդ նորույթները, իսկ 2-րդ նորույթը պատշաճ հիմնավորված չէ: Հեղինակի ներկայացրած 3-րդ նորույթը՝ ՀՀ և ԻԻՀ արժեթղթերի շուկաների զարգացման եռաքայլ «ռազմավարությունները» հիմնավորված չեն ոչ տեսական նյութի վերլուծությամբ, ոչ էլ հնարավոր ծախսերի, կորուստների, ռիսկերի կամ ակնկալվող արդյունքների հաշվարկներով և կանխատեսումներով: Բացի այդ, հեղինակը առաջարկում է, հաշվի առնելով սփյուռքի և ներքին ներուժի դերը ՀՀ տնտեսության զարգացման մեջ՝ կորպորատիվ արժեթղթերի շուկայի առաջխաղացման համար ստեղծել պետական հիմնադրամ, որի անհրաժեշտ եկամուտները կձևավորվեն 1000 դրամանոց «Մասնակցություն» բաժնետոմսի ներդրմամբ: Հիմնադրամը հավաքագրած միջոցները կներդնի պետության կողմից գերակա ճյուղ համարվող զբոսաշրջության ոլորտում: Կարծում ենք, առաջարկը պետք է վերաշարադրվի այնպես, որպեսզի օրենսդրական հակասության խնդիր չառաջանա, մասնավորապես հիմնադրամը չի կարող թողարկել բաժնետոմսեր, մի գուցե հեղինակը նկատի ունի մասնակցության անդամավճարը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ամփոփելով շարադրվածը, կարելի է հավաստել, որ ատենախոս Մասիս Օհանեսի Սարքիս Սարքիսսյանի «Կորպորատիվ արժեթղթերի շուկայի զարգացման հիմնախնդիրները (Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության նյութերով)» թեմայով ատենախոսությունում

կատարել է տեսամեթոդական և վերլուծական բնույթի հետազոտություն, որում առկա են որոշակի բովանդակային անհարթություններ: Դրանով պայմանավորված լիովին հիմնավոր չեն գիտական նորույթները:

Ատենախոսության սեղմագրում և հեղինակի հրատարակած գիտական 12 հոդվածներում արտացոլված են ատենախոսության հիմնական դրույթները:

«Կորպորատիվ արժեթղթերի շուկայի զարգացման հիմնախնդիրները (Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության նյութերով)» թեմայով պաշտպանության ներկայացված թեկնածուական ատենախոսությունը որոշակի վերապահումներով համապատասխանում **է Ը.00.03** - «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսություններին «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման» 6-րդ և 7-րդ կետերի և ՀՀ ԲՈԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին:

Ատենախոսությունը 22.09.2021թ քննարկվել է Հայաստանի ազգային ագրարային համալսարանի Ֆինանսահաշվային ամբիոնի 2021-2022 ուստարվա արտահերթ 2-րդ նիստում: Նիստին ներկա էին թվով 9 մասնակիցներ՝ Գոհար Վարդանյան(դոկտոր),Հակոբ Խաչատրյան (դոցենտ), Արեգ Բաղդասարյան (դոցենտ), Ամալյա Գալստյան (տ.գ.թ), Արման Տոնիկյան (տ.գ.թ), Թամարա Հարությունյան (տ.գ.թ), Աննա Մելքոնյան (տ.գ.թ), Դավիթ Արաբյան (տ.գ.թ), Գևորգ Քեշիշյան (տ.գ.թ):

Ֆինանսահաշվային ամբիոնի վարիչ
տնտեսագիտության թեկնածու Ա.Մ. Գալստյան
Ա.Մ. Գալստյանի ստորագրության իսկությունը
հաստատում եմ
ՀԱԱՀ գիտ. քարտուղար
գ.գ.թ., դոցենտ Գ.Վ.Ավագյան

Ընդհանուր բաժին
Общий отдел
General department